

Հաստատում եմ ՀՀ ԱԻՆ

«Ճգնաժամային կառավարման

պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի

նեկտոր *Վ. Մաթևոսյան*



ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման միջոցով վառելիքի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի:

Գնման ընթացակարգը իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Ավան Աճառյան 1 հասցեում 28. դեկտեմբեր 2017թ., ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

1. Խաչատրյան Հովհաննես - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի հակահրդեհային պատրաստության ցիկլի պետ

Անդամներ՝

2. Ս.Խուրշուդյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի համակարգչային օպերատոր
3. Լ. Սահակյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի «911 արտակարգ թերթի» համակարգչային մուտքագրող

Համակարգող՝

4. Ա.Գևորգյան - «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնումների գծով մեթոդիստ

ՕՐԱԿԱՐԳ

1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- 1.1 «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

Եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի, և մասնակցի ֆինանսական միջոցները համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 Ընտրված մասնակիցը սահմանված կարգով և ժամկետներում ներկայացրել է հրավերով պահանջված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ

2.1 «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Ֆլեշ» ՍՊԸ-ին:


2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է)

2.3 Համաձայն «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով անգործության ժամկետ սահմանել 5 օրացույցային օր:

2.4 «ՃԿՊԱ-ԳՀԱՊՁԲ-18/01» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնումներ կատարելու ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացույցային օրը (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում՝ դրան հաջորդող աշխատանքային օրը):


Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Խաչատրյան




Անդամներ՝

Ս. Խուրշուդյան



Լ. Սահակյան



Քարտուղար՝ Ա. Գևորգյան

